ՄԱՆԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԻՄ ԸՆԿԵՐ ՆԵՍՈՆ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

Վ. Պ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Հ. Թումանյանը մեծագույն մանկական գրող է, մանկան հոգեբանության հանճարեղ գիտակ ու թարգման։ Նրա երկերը այնքան պարզ ու վճիտ են, այնքան հուզական ու գրավիչ, որ հավասարապես սիրելի են բոլոր տարիքի երեխաներին։ Համոզվելու համար բավական է հիշել նրա անզուգական պատմվածքները («Գիքորը», «Իմ ընկեր Նեսոն», «Եղջերուն»), չգերազանցված հեքիաթները («Քաջ Նազարը», «Զախչախ թագավորը», «Սուտիկ որսկանը»), նրա մանկական բանաստեղծությունները, պոեմները, բալլադները ու լեգենդները («Շունն ու կատուն», «Պողոս-Պետրոսը», «Գառնիկ ախպերը», «Ջարի վերջը». «Մուկիկի մահը». «Մի կաթիլ մեղրը») և վերջապես համաշխարհային գրական գոհարների բարձրարվեստ թարգմանությունները։

Խորապես իմանալով երեխաների հոգեբանությունն ու հետաքրքրությունները, ընկալման հնարավորությունները, հույզերն ու զգացմունքները, նրանց բարոյական բարձր հատկություններ պատվաստելու միջոցները, Թումանյանը գյուղիչ խոսքի, դինամիկ գործողությունների և վառ պատկերների միջոցով երկերին հաղորդել է ներգործական հզոր ուժ։

«Գիքորը» կարդալիս անհնար է չհուզվել, չկարեկցել պատանի գյուղացուն, ատելությամբ չլցվել բազմ արտեմների նկատմամբ։ Այդպիսին են նաև «Մարոն». «Իմ ընկեր Նեսոն» և մյուս ստեղծագործությունները, որոնցում Թումանյանը բացահայտում է մանկան հոգեկանի առանձնահատկությունները, նրանց ձևավորման ուղիները։

Ներկա հոդվածում մենք կսահմանափակվենք նրա պատմվածքներից մեկի՝ հերոսի՝ Նեսոյի հոգեկան էվոլյուցիայի քննությամբ, ցույց տալով, թե ինչպես բանաստեղծը կարողացել է ներկայացնել հին գյուղի սոցիալական պայմանների ազդեցությունը կարիքի ծանրության տակ նվաղող երեխայի հոգեբանության վրա, բացատրելով, բայց բնավ չարդարացնելով Նեսոյի վարքագծի հետագա ընթացքը։

Որպեսզի իր պատմվածքը դարձնի ավելի համոզիչ և զգայական, Թումանյանը ներկայացնում է իր մանկության ընկերոջը՝ Նեսոյին, նրա լավն ու վատը հաղորդում ընթերցողին՝ իր անմիջական հիշողությունների, ապրումների, վերաբերմունքի ու գնահատականների միջոցով։ Այսպես, Նեսոյին կարծես տեսել ես, լսել, այժմ էլ հիշում ես նրան, ինչպես ինքը՝ Թումանյանը։ «Մի ընկեր ունեինք, անունը Նեսո։ Է՜նքան հեքիաթներ գիտեր... Ամառվա լուսնյակ գիշերները մեր դռան գերանների վրա շուրջ-բոլոր նստոտում էինք հիացած պլշում Նեսոյի՝ ոգևորությունից գեղեցկացած դեմքին։ Ու պատմում էր նա Հուրի փերիներից, Զմրուխտ դուշից. Լիս ու մութ աշխարհից... — Նեսո ջան, Նեսո, հիմի էլ Կուր թագավորի հեքիաթը պատմի»։

Այսպես, մոտիկ ու հարազատ դարձնելով Նեսոյին, Թումանյանը անկեղծ ցավ ու կարեկցանք է առաջ բերում ընթերցողի մոտ, ստեղծելով տեսողական ու լսողական նորանոր ուժեղ պատկերներ.

«—Դեռ էսօր էլ,— գրում է Թումանյանը,— ականջումս է Նեսոյի լացի ձենը, որ իրենց դռանը թավալ գալով գոռում էր, թե՝ ես էլ եմ ուզում ուսումնարան գնամ։ Եվ դեռ ականջումս է նրա հոր ձենը... «Կա ոչ, կա ոչ... որտեղի՞ց տամ... երեք մանեթ ունենամ՝ կտանեմ հացի կտամ... հրես մնացել եք սոված»[1]

Երբ զուգահեռ ենք անցկացնում «Գիքորը»-ի և «Իմ ընկեր Նեսոն»-ի միջև, ընդհանուր բաներ շատ ենք տեսնում, թեպետ գրանցում պատկերված են գյուղական երեխաների կյանքի տարբեր պայմաններ ու կողմեր։ Երկուսն էլ վերաբերում են նույն պատմական ժամանակաշրջանին, բայց նույնը չէ նրանց անմիջական միջավայրը, որ իր կնիքն է դրել երեխաների վարքագծի վրա։

Մենք տխրում ենք, վշտանում, հուզվում «Գիքորը» կարդալիս։ Ուրիշ զգացմունքների հետ շաղախված նույնատիպ ապրումներ ենք ունենում նաև «Իմ ընկեր Նեսոն» կարդալիս։

Մեզ մոտ առաջացած հոգեվիճակների ու զգացմունքների վերլուծությամբ, ինքնադիտողության միջոցով միայն կարող ենք հասկանալ այդ երկու պատմվածքների գործած ազդեցության ընդհանրություններն ու տարբերությունները։ Ինչքան էլ դրանց ազդեցությամբ առաջացած հոգեվիճակները նույնանիշ լինեն՝ դրական (ուրախություն, սեր, կարեկցություն), կամ բացասական (տխրություն, հուսահատություն, հիասթափություն), դրանք Գիքորի ու Նեսոյի նկատմամբ տարբեր կլինեն իրենց նրբերանգներով, քանի որ Գիքորն ու Նեսոն էլ տարբերվում են միմյանցից իրենց խառնվածքով ու բնավորությամբ, տարբեր են նրանց վրա ներգործող, նրանց հոգին ձևավորող ազդակները, կյանքի անմիջական պայմանները։

Գիքորը մաքուր էր. միամիտ ու խեղճ և մենք կարեկցում ենք նրան, անկեղծորեն ողբում նրա կորուստը։ Կարեկցանքի այլ գունավորումներով ենք վերապրում Նեսոյի հոգեկան անկումը։ Խորին ցավ ես զգում նրա խորամանկության, ստախոսության, ագահության, ձեռնաքաշության, վերջապես՝ գողության ու ձերբակալության մասին իմանալիս։ Երկու ողբերգություն է ծավալվում մեր առջև. երկուսն էլ սրտի տարբեր լարերին կպչող և տարբեր երանգների հնչյուններ առաջացնող։

Թումանյանին հաջողվում է խոսքի արտահայտչականության բոլոր միջոցներն օգտագործել՝ իր զգացմունքների նույնիսկ անորսալի երանգներն հաղորդել ընթերցողին։ Մի դեպքում դա վարպետորեն օգտագործած խոսուն բառ է, մյուս դեպքում՝ բազմիմաստ ժողովրդական արտահայտություն կամ վառ պատկերներ, որոնք բորբոքում են ընթերցողի երևակայությունը և ուղիներ հարթում հուզական ընկալման համար։ Այս միջոցներով է, որ Թումանյանը կարողանում է բացահայտել իր մանուկ հերոսների հոգեկանը։

Նեսոյի և Գիքորի դժբախտության սոցիալական մոտիվները, իրենց լայն առումով, նույնն են, տարբեր են նրանց դրսևորման ձևերը։ Նրանք դեռահաս են, միամիտ, անհոգ, կենսախինդ ու երջանիկ։ Նրանց հասկանալի չէ իրենց ընտանիքների նյութական վիճակի ծանրությունը։ Տաշտից մի կտոր հաց ու

[1] Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 118։

պանիր վերցնելով նրանք ուտում են, խաղում, զոհ ու անվրդով։ Աղքատության ճնշող ազդեցությունը նրանք դդում են ավելի ուշ, երբ Գիքորին տանում են քաղաք ու մատնում բազազ Արտեմի քմահաճույքին, իսկ Նեսոն, միջոցներ չունենալու պատճառով զրկվում է կրթությունից։

Հենց սկզբից Թումանյանը ընթերցողի մոտ դեպի Նեսոն առաջացնում է համակրանքի ուժեղ զգացմունք, որը պետք է հակադրվի պատմվածքի ընթացքում առաջացող բացասական զգացմունքներին և պատմվածքի վերջում ամբողջ թափով նորից հնչի։

Զգացմունքների այսպիսի բազմազանություն ստեղծելու, դրանք միմյանց հակադրելու միջոցով Թումանյանը ցանկացել է բացահայտել անհատի անկման օբյեկտիվ պատճառները, հասկացնելով, թե պետք է ըմբոստանալ ոչ թե տվյալ կոնկրետ անհատի դեմ, այլ նրան ծնող ու սնող դառը իրականության դեմ։ Դա զերազույն չափերով հաջողվել է հեղինակին թե՛ «Գիքորը» և թե՛ «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքներում։

«Իմ ընկեր Նեսոն» պատմվածքի առաջին կեսէջանոց մասը մաժորային երանգավորում ունի, սակայն երկրորդ մասից սկսած պատկերը փոխվում է։ Պատճառը երեխաների կյանքի պայմանների փոփոխությունն է։ Նոր իրադրությունները ու մարդկային հարաբերությունները ազդում են երեխաների վրա, իրենց կնիքը դնելով նրանց ընկալումների, մտապատկերների, հույզերի ու մտածելակերպի վրա։

Ընկերներից մեկին՝ Հովհաննեսին, հաջողվել է դպրոց ընդունվել, իսկ մյուսները՝ չունևորները դուրս են մնացել և ահա ամիսներ շարունակ «...նրանք գնում էին ուսումնարանի պատի տակին նստոտում՝ սպասում էին մինչև դասերս վերջանար, որ միասին գնայինք»։

Այդքան ուժեղ արտահայտված հոգեհարազատությունը երեխաների մոտ ժամանակի ընթացքում սկսում է թուլանալ ու խամրել։

Ընկերական զգացմունքների մեջ առաջանում է, գուցե ոչ շատ խորը, բայց արդեն զգալի ճեղքվածքը։ Երեխաներն այլևս չեն գնում դպրոց ընկերոջն ընդառաջ։ Տաք գույներով երանգավորված կտավի վրա դրվեց առաջին գորշ շերտը, որը հաջորդ երկու տարիների ընթացքում ինտենսիվացավ։

Թումանյանը հարազատ է մնացել հոգեբանական ճշմարտությանը. ոչինչ չի կատարվում միանգամից, անհասկանալի ու անբնական կերպով։

Ժամանակին համընթաց մռայլ շտրիխները թանձրանում և դրա ընկալման հետ կապված մեր մինորային զդացմունքներն էլ հետզհետե ուժեղանում ու որոշակի են դառնում։

Հովհաննեսը գյուղից հեռացել է, սովորում է մոտակա գյուղաքաղաքում։ Մի քանի ամսից հետո արձակուրդին գյուղ է վերադառնում ու հանդիպում ընկերներին։ «...Չեմ հիշում ինչպես բարևեցինք. միայն էն է միտս մնացել. որ նրանք էլ առաջվա նման մտերիմ ու հարազատ չէին ինձ հետ»։

Որքան որ երեխաների զդացմունքներն ուժեղ են, հաճախ աֆեկտի աստիճանի հասնող, այնքան շարժուն են ու անկայուն։ Եվ եթե միառժամանակ հետո նրանք չեն ամրապնդվում, և աննպաստ պայմաններն էլ իրենց բացասական դերն են կատարում, ապա թուլանում ու նույնիսկ բոլորովին կորչում են։ Քանի դեռ Հովհաննեսը դյուզում էր, ռեալ հնարավորություն ուներ ընկերներին հանդիպելու, մտերմությունն ու սերը առավել ամրապնդելու։ Մյուսների նման նա էլ դեռ դյուզի երեխա էր, և ընկերները հիմք չունեին նրա վրա

.ակնածանքով նայելու։ Ամեն ինչ փոխվեց, երբ նա գյուղից հեռացավ գյուղաքաղաք։ Գեղջուկ երեխաների երևակայությամբ գյուղաքաղաքն ավելին էր, քան իրականում, ուստի և այնտեղից վերադարձած Հովհաննեսն էլ նրանց աչքում արդեն ուրիշ մարդ էր դարձել։ Նոր միջավայրը փոխել էր նաև Հովհաննեսին։

Գյուղաքաղաքից եկած Հովհաննեսը զարմանք է առաջացնում երբեմնի ընկերների մոտ ամենից առաջ իր հագուստով, հանգամանք, որ ենթակա է երեխաների անմիջական ընկալմանը։ «...Նեսոն ձեռքը քսեց իմ շորերին, նրան հետևեցին մյուսները ու զարմանք հայտնեցին, թե ինչ փափուկ են»։ Այս տողերով Թումանյանը բացահայտել է երեխաների հոգու զգայունությունն ու անմիջականությունը, միաժամանակ ցույց տալով, որ ընկերական սիրո ջերմությունը դեռ ինչ-որ չափով պահպանված է նրանց սրտերում։

Հովհաննեսին էլ միայն հիմա են նկատելի դառնում ընկերների կեղտոտ ու պատառոտված շորերը։ Այս պահից սկսած երկու կողմերն էլ կարծես պատնեշվում են իրենց ինքնազգացողությամբ, ընդ որում աստենիկ զգացմունքները (ընկճվածությունը, անհամարձակությունը, վախը, թախիծը) դառնում են չունևորության մշտական ուղեկիցները, իսկ ստենիկ զգացմունքները (ինքնավստահությունը, համարձակությունը, ինքնագոհությունը)՝ ունևոր մարդու վարքագծի հիմնական ու հարատևող գործոններ։

Կյանքի վատ պայմանները երեխաների, մանավանդ պատանիների ու երիտասարդների հոգեկանում արտացոլվում են յուրովի, առաջացնելով ընկրճվածություն, քաշվածություն, ինքնամփոփություն և այլ նման զգացմունքներ։ Մարդու հասունացման հետ երբեմն նույն այդ զգացմունքները կարող են փոխարինվել նախանձով, նենգամտությամբ, չարամտությամբ, դուռ բանալ վատ արարքների։ Մարդկային հոգու նման վերափոխության վառ օրինակ է Նեսոն.

Երբ Հովհաննեսը ուսումը շարունակելու նպատակով տեղափոխվում է քաղաք, բնականաբար, ընկերների բաժանման ժամանակաշրջանը ավելի տևական է դառնում և նրանց միջև առաջացած.անջրպետն ավելի է խորանում։

«Երբ էնտեղից էլ վերադարձա՝ իմ առաջվա խաղընկերները, որ արդեն մեծ տղերք էին, եկան բարևեցին մյուս գյուղացիների նման ու նրանց հետ էլ հեռու կանգնեցին»։

Նեսոն կասկածում է, թե արդյոք քաղաքացի դարձած ընկերը հիշո՞ւմ է այն գիշերները, երբ գերանների վրա նստած հեքիաթ էին պատմում։

— Վա, ինչպե՞ս չի միտս... միթե կմոռանամ։ Էգ իմ մանկության ամենալավ հիշողություններից մինն է,— պատասխանեցի ես»։

«Նեսոն կարծես թե ուրախացավ», սակայն դա անցողիկ մի զգացմունք էր և, ինչպես Թումանյանն է նկատում, նա «...դարձյալ մնաց օտար ու հեռու»։

Պատմվածքի հաջորդ բաժնում պատկերված է ձևավորված ու հասունացած Նեսոյի ներքնաշխարհը։

Հոգու այն նրբազգացությունը, որ ստեղծվել էր մանուկ հասակում և այժմ էլ բնորոշ էր Հովհաննեսին, իսպառ վերացել էր Նեսոյի մոտ, թերևս դա էլ պատճառ, որ Նեսոն ընկերոջ բնավորության դրական հատկություններն էլ հակված էր ընկալելու որպես բացասական հատկություններ։

Բնավորության ամենավսեմ հատկություններից են նրբանկատությունն ու նրբազգացությունը, որոնց շնորհիվ մարդը կարողանում է հասկանալ, կա-

ընկցել ու վերապրել ուրիշի ապրումները և համապատասխան վարք հանդես բերել։

Մարդկանց մտերմության հիմքում ընկած ամենակարևոր հատկություններից են նրանկատությունն ու նրբադդացությունը, և պատահական չէ, որ Թումանյանը արդեն կերպարանափոխված Նեսոյի մասին խոսելիս առաջին հերթին նրա այդ հատկության բացակայությունն է մատնանշում։

Հովհաննեսը Նեսոյի ձիով գնում է քաղաք, բայց լինելով նրբադդաց ընկեր, չի կարողանում հանդուրժել, որ ինքը ձի նստի, իսկ Նեսոն ոտքով գնա։ «Մի քիչ անցնելուց հետո հայտնեցի, թե ես ոտով գնալն ավելի եմ սիրում, քան ձիով ու ձիուց իջա... Նեսոն սրա վրա ուրախացավ, բայց նկատեցի, որ նա իմ արածը վերագրում է ոչ թե իմ բարիությանն ու ընկերական ղդացմունքին, այլ իմ հիմարությանը։ Ես վշտացա իմ մեջ...»։

Հաջորդ պահերին բացահայտվում են Նեսոյի վարքի ավելի խոցելի գծերը, որոնք մի կողմից ավելի են բորբոքում բարյացակամ ու նրբադդաց ընկերոջ ինքնասիրությունը, իսկ մյուս կողմից՝ խորապես վշտացնում նրան։

Հովհաննեսի դանակով Նեսոն ձմերուկ է կտրում, ապա յուրացնում դանակը և հավատացնում ընկերոջը, որ այն վերադարձրել է. «Ես սլաքը նկատեցի, որ նա իմ դանակը տակով արավ, վերջն էլ ուրիշները տեսել էին ձեռին»։

Այս բոլորից հետո էլ հին ընկերությունից ինչ որ հաճելի բաներ դեռ առկայծում էին Հովհաննեսի սրտում, բայց Նեսոյի հաջորդ քայլը խորտակեց ամեն մի պատրանք՝ թողնելով ընկերոջ սրտում միայն ծխացող մոխիր, անսփոփ ցավ ու մրմուռ հոգեպես խորտակված ընկերոջ բախտի համար։

Տեղ հասնելուց հետո Հովհաննեսը բացի ձիու վարձից Նեսոյին նվիրում է մի արխալուղացու, սակայն շնորհակալության փոխարեն լսում է Նեսոյի խոսքերը... «Բա մի շայի փող չես բախշում...»։

Տարիներ հետո Թումանյանը գյուղամիջում հանդիպում է Նեսոյին՝ «...մի աչքց թոկով կապած ու գլխակոր...», «...գողություն է արել...»։

«Նեսոն աղքատ է ...Նեսոն տգետ է... Նեսոն լցված է գյուղական չարքաշ կյանքի դառնություններով... Նա էլ եթե ուսում առներ, կրթվեր, ապահով լիներ՝ լավ մարդ կլիներ, գուցե ինձանից էլ շատ ավելի լավ»։

Սա է Թումանյանի եզրահանգումը։ Սակայն սրանով չի վերջացնում հեղինակը այս փոքրիկ, պարզ շարադրված, բայց շատ խորիմաստ ու անչափ զգացմունքային պատմվածքը։

Բանաստեղծը պատմվածքի վերջում կարծես կամենում է նորից վերհիշեցնել սկիզբը, արթնացնել ընկերության վսեմ զգացմունքները և դրանով էլ ընդգծել վատ պայմաններում խեղված մարդկանց ողբերգությունը։

Ընթերցողի հիշողության մեջ՝ միմյանց հակադրվելով երևում են երկու տարբեր Նեսոների մտապատկերներ, որոնցից ամենապայծառը առաջինն է՝ «...էն մանուկ Նեսոն, լուսնյակ դիշերներին գերանների վրա նստած հեքիաթ ասող Նեսոն, մաքուր ու միամիտ Նեսոն, իմ մանկության ընկեր Նեսոն»։